

հախ անել Վեհին վերայ, յերկարեցաւ դաւէն մինչեւ ցայսօր: Իսկ յաւուր կիրակէին, զոր ի վաղիւն աւանդելոց էր զքաղցր հոգին, յորդորեալ զտաճիկ դաւէճին, եկեալ ի վերայ սաստիկ հիւանդութեանն, կամէին մահճօք վերցնել ի մէհկէմէն: Եւ թէ զինչ չարիք զործեաց յայնմ ժամու՝ ընդ զրով ոչ լինի արկանել, զոր յայնմ սաստիկ հիւանդութեանն չարաչար նզովիւք բանադրեաց զչարն զայն. եւ մեք յեկեղեցւոյն հրապարակագոյժ արարեալ զնզովեալն զայն. զորս ի խոր երեկոյին առեալ զնոյն տաճիկան, մինչ հոգէվարի կայր՝ խնդրէր զնորումըն, զոր դառնացաւ կրկին եւ ոչ հայեցաւ յերեսն, եւ այսպէս վշտակրութեամբ եւ խղճութեամբ աւանդեաց զհոգին, զորս յայսմ վրէժխնդրութիւն մնաց քեզ առնել, որ յանձն արար զինքն քեզ՝ սբ. հօրք մեծի: Իսկ ի վեցերորդում թաղմանն սրբոյ հօրն, եւ հրաման թագաւորին ի վերայ Մարտիրոս վրդ. պտին լինել առաջնորդ սբ. յերուսաղէմայ, զի թէ միակողմանէ թաղծեալ տրտմեցաք բազում սգով, բայց յայսմ կողմանէ խնդամք, զի դարձեալ վրդ. պտին խնդացաք: Իսկ մեք որք աստ յայսմ սգոյ պատահեցաք եւ լուաք զպատուիրանս կտակի հանգուցեալ սրբոյ հօրէ մեծի, առ ոտս քո անկեալ աղերսեմք, զի փութանալի հրաման թղթոյ քո հասուցանիցես յաթոռն սբ., զի մի՛ եղծ(ց)ի կտակ հոգեւոր տիրին. զի Սահակ վրդ. պտն հրամանքդ գիտակ ես եւ գիտես. նմա յանձն արասցես Աթոռն սբ. եւ հայրութիւն քո մի վերջացուցես ի նմանէ, այլեւ սաստ զրեսցես ամենայն յարեւելեան առաջնորդաց եւ վարդապետաց, նաեւ թուղթ մի՛ Զուղայեցւոց, զի առանց հակառակութեան զՍահակ վրդ. յն յառաջ կոչեսցեն. որովհետեւ յանձն արար քեզ, քանզի Միքայէլ վրդ. պտն եւս մեռաւ, հրամանքդ ողջ լինիս, այլ այնպէս մարդ չկայ, բայց թէ ոմանք նորարոյսք հակառակող են, սաստեսցես մեծահրաման սաստկութեան, զի կտակ հոգեւոր տիրին հաստատուն պահեսցեն, զի յետ Այ. զՏէրդ ունիմք մեր հայր եւ օգնական եւ Սբ. Էջմիածինն ի քեզ է յանձին, եւ Տէրդ մեր ողջ լիցի ի գլուխն

Գրիստոս:

Գրեցաւ ի թուիս ՌՃԻԹ., օգոստոսի ամսոյ ի Ժ երորդում աւուրն ի Ստամպոլ քաղաքի, նուաստագոյն ծառայից քոց: Գրիս պատճառքն այսոքիկ Ղայիսերցի Գրիգոր Վրպն. եւ Ած. ատուր Վ'պն.:

Նամակը, ինչպէս տեսանք, կը յիշէ «քէ ո՞րպէս հնարիւք եւ զափուզուով ի Տիգրանակերտու բռնաբարեալ դարձուցին զՎեհս մեր (Յակոբ Զուղայեցին) ի Ստամպոլ»: Նամակը կը խօսի նաեւ Զուղայեցիի հիւանդութեան մասին եւ վերջապէս կը մանրամասնէ անոր վերջին օրերը սապէս: «...հասա յուլիս ամսոյ ԻՆ (25) յորում աւուր յՈւսկուտարն լինելով, ի չորեքշաբաթու հիւանդացեալ ի ցրտութենէ օդոյ, տապնապ ջերմութեան սաստիկ ըմպոնեալ, մինչեւ գիտել ինքեան զելն իւր յաշխարհէ: Ասաց մեզ զրել քաղաքին դալ առ ինքն եւ պատուիրել զոր ինչ ասելոցն էր: Իսկ իբրեւ եկին ամենեքեան երեւելիք, որք յարեւմտից եւ որք յարեւելից, եւ ասաց նոցա անդարձ կտակի, որոց յունկն ամենից լուաւ: Բայց մեծամեծք քաղաքիս խնդրեցին ի սրբոյ հօրէն դառնալ ի քաղաքն, յորոց ճեղքեալ յերկուս՝ ոմանք ի ս(ուր)բ Ա(ստուա)ծածինն եւ ոմանք ի Ղայաթիայ, յորոց բռնաբարութենէ բազմաց մուծին ի Ստամպոլ յաւուր չաբաթու: Եւ յայնմ աւուր երեկոյի արձակեաց զամենայն կապեալսն եւ զբանադրեալսն յինքենէ եւ օրհնեաց զԺողովուրդսն եւ յանձն արար զինքն քեզ՝ (Յով. Այնթապցիի) ասելով, նա հոգասցէ զԱթոռն սուրբ (Էջմիածնայ), զի մի՛ աւերեսցի ի հակառակորդաց: Իսկ յաւուրն կիրակիի թէ ո՛րքան դառնութիւն հասուցին յայնմ հիւանդութեան չարաճճիկը ոմանք, զորս յետոյ մի ըստ միովէ պատմելոց եմք: Բայց յերկրորդում աւուր օգոստոսի ամսոյ յերկուշաբաթոյ յերկու ժամու աւանդեաց քաղցր հոգին առ Տէր, մինչ անկեալ կայր ի վերայ բազկաց մերոց»:

Տեսանք որ դաւանադիրը կոչուած թուղթը իբր թէ պատրաստուած է Օգոստոս մէկին, Կիրակի օրը. այդ առթիւ հոն կը գտնուին լատին եւ հայ հոռոմէադաւան կրօնաւորներ որոնք կը վկայեն